կան խորհրդի անցեալ ապրիլ 5-ի № 106 գրութիւնը Սեբաստիոյ Արեւելեան կաթոլիկաց տոկոսների մասին որոշեց. պատուիրել Մինոգիս գանձապահին ուղարկելու Վանայ առաջնորդարանի ներկայացուցիչ պ. Գէորգ Ճէտէգեանին, որը Տփխիսումն է, 458 ռուբլի և այդ գումարի փոխադրութեան մասին տեղեկացնել Վանայ առաջնորդարանին. № 287.

Մայիսի 7/10-ին Մինոգը լսելով աղգիս Վեհափառ Հայրապետի ապրիլ 12-ի № 930 կոնդակը որոշեց. տալ քննիչ Տ. Մատթէոս վարդապետին Նորին Սրբութեան հաստատած հրահանգը և առաջադրել նրան ճանապարհ ընկնել դէպի թեմերը իւր պաշտօնը ըստ հրահանգին կատարելու, սկսելով քննութիւնը վրաստանի թեմից. № 288.



ԿՐՕՆԱԿԱՆ–ԲԱՐՈՅԱԿԱՆ.

ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ.

«Այս Յիսուս, որ համբարձաւ երկինք, կգայ այնպէս ինչպէս որ երկինք բարձրանալիս տեսաք». Գործք Ա.ռ. I. II.

Պօղոսը չէ խօսում որ և է համբարձման մասին, եթէ նա Յարուցեալի երևալն է թւում. Նա նկարագրած է Քրիստոսի պատկերը, որ ինքը տեսաւ Դամասկոսի առաջ, նոյն կարգաւ, ինչպէս որ երևաց Պետրոսին և տասնմէկին. Նա այն կարծիքին չէ, թէ բաժանման ժամին ինքն աւելի քիչ է տեսել քան ընտրեալներից որ և է մէկը. Ամենայն հաւանականութեամբ նա հիմնւում է այն բանի վերայ, որ ինքն էլ միւսների նման շնորհի արժանացաւ. Հէնց այս իրողութիւնից, որ Պօղոսը իւրը և առաջին յայտ-

նութիւնները համադասում է, պէտք է սկսել, եթէ մարդ համբարձման պատմութիւնը ճշմարտապէս հասկանալ է կամենում։

Համբարձումը չէ նշանակում, որ երկինքն այնտեղ է և որ Յիսուս փակուած դռների յետևը ոսկեայ դահլիճի մէջ ապրում է, որտեղ Նրան ոչ մարդկային մոտաժունքը և ոչ մարդկային աղօթքը հասնել կարող են։ Նա հրաժեշտ չէ տուել, ընդմիշտ հեռու լինելու համար։ Համբարձումից յետոյ էլ Նրա ճանապարհը դէպի իւր հաւատացեալները բաց է, հրաժեշտից յետոյ էլ նա կտեսնուի, կլսուի, կհաւատան և կսիրեն։ Համբարձումից յետոյ էլ Նրա անձնաւորութիւնը կգրաւէ մի Պօղոսի։

Դրանով մեզ ապացուցւում է, որ համբարձման շօշափելի նախադէպքերին շատ ծանրակշիռ նշանակութիւն չպիտի տանք։ Այստեղ խօսքը մի որ և է տեղի տեղափոխութեան համար չէ, որը Փրկչին երկրից բաժանում է։ Եւ ինչպիսի եղանակով պիտի լինէր մի այդպիսի տեղի տեղափոխութիւնը։ Մենք գիտենք, որ երկինքը, որ ամպերի յետևն է, հրապարակ չէ։ Մարդ կարող է միլիոնաւոր վերստեր թռչել և չհասնել որ և է դրախտի՝ հրեշտակներով, նահապետներով և փրկուածներով լի։ Տեսանելի աշխարհի մէջ այդպիսի տեղի համար ոչ ոք չի խօսում։ Երկրային մարմնի համար մի երկնային մարմնի մասին այսօր ոչ ոք չի կարող խօսել։ Այսպիսով համբարձումը Յիսուսի վերջնական հրաժեշտը չէր և ոչ վերջնական տեղափոխութիւնը։ Ի՞նչ է իսկապէս, սակայն, համբարձումը։

Վերջին անգամն է, որ Փրիստոս շրջապատուած է աշակերտների ստուար խմբով և նրանց աչքերն ու հոգին Փրկչի էութեամբը լցուում են։ Նա յայտնուում է նրանց, ինչպէս որ Պօղոսին էր յայտնուել, սակայն նկատելի է այն, որ աշակերտների մի մեծ խումբ է ժողովուել։ Նրանց հետ խօսում է Փրկիչը կրկին անգամ անցածի և ապագայի մասին։ Արդեօք նա այդ ժամանակ Իսրայէլի թագաւորութիւնը կվերականգնի։ Արդեօք նա

վերջապէս ցանկանում է այդ խաչից, մահից և գերեզմանից յետոյ։ Արդեօք նա այժմ այն մեծ, փայլուն երազը, որ Իսրայէլի մխիթարութիւնն էր իւր անարգութեան մէջ, իրականացնել է կամենում։ Կամենում է նա այժմ իբրև Դաւթի որդի, որին Հերովդէսը և Պիղատոսը իբրև յարդ դէն ձգեցին, կամենում է նա տաճարը մաքրել, Սիօնի աշտարակը միջակէտ դարձնել և իւր ժողովրդին հեթանոսների միջից բարձրացնել։ Կամենում է նա այժմ զօրութեամբ, վեհապանծ և փառքով գալ իբրև խոստացեալ Փրկիչ, որին ծանրաբեռնեալ և տաժանեալ ժողովուրդները սպասում են, կամենում է երկրիս վերայ իշխել։ Ո՛չ, նա այդ չէ կամենում։ Նրա թագաւորութիւնը այս աշխարհից չէ։ Նա իսրայէլացիների երկրային երազները չի իրականացնի։ Ուստի և իւրայիները մարգարէների յոյսերը պիտի մերժեն։ Այն գաղափարը, որին սպասում են, այնտեղ երկնքում պիտի բարձրանայ։ Նախ վերևն է կատարումն, վերևն է ներդաշնակութիւնը և յաղթութիւնը, իսկ այնտեղ աշխարհի և մեղքի հետ պատերազմ է, մի կռիւ մինչև մահ, մի հառաչանք յուսոյ մէջ։ Ոսկեայ ուրախութիւնը երկինք վերացաւ։ Այնուհետև չեն երգիլ այլ ևս հին Երուսաղէմին և նրա նոր կուսութիւնը, այլ նոր Երուսաղէմին վերևում, ոսկուց շինած քաղաքին, որին աչք չի տեսնում, քանի որ մահկանացու է։ Այո՛ հրաժեշտը հինից դէպի նոր յոյսը Քրիստոսի աշակերտները պէտք է տեսնեն։ Դուք պէտք է երկրի վրայ ոչ մի դրախտ չսպասէք։ Դուք պէտք է ձեր աչքերը վերև՝ այն կողմը բարձրացնէք։

Ինչպէս որ դուք նրան տեսաք, նոյնպէս էլ նա պէտք է դայ։ Ո՛չ այլ կերպ, ոչ երկրային կերպով։ Իբրև հոգևոր, ներքին զօրաւոր հոգւոյ փրկիչ կգայ նա և ձեզ կզօրացնէ մինչև վերջ։ Նա ապրում է. և հոգևոր կեանքի կեդրոնն է։ Երկնքում, Աստուծոյ յարաբերութեամբ մօտ է նա իւրայիններին։ Նա ասում է նրանց՝ մի վախենաք, տեսէք, ես ձեզ մօտ եմ ամենայն օր մինչև աշխարհի վերջը։

Ֆ. Նաումանից թարգմ.

Առաքել վարդապետ.